**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ**

**ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան․

ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀԱԺ աշխատակարգի 39-րդ և 40-րդ կետերի դրույթներով՝ ներկայացնում եմ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Կ-1334-21․04․2026-ՏՏԳՇ-011/0 օրենքի նախագծի վերաբերյալ իմ գրավոր առաջարկը:

Խնդրում եմ սահմանված կարգով առաջարկը դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

Ազգային ժողովի պատգամավոր Վահե Ղալումյան

ԱՌԱՋԱՐԿ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Կ-1334-21.04.2026-ՏՏԳՇ-011/0 օրենքի նախագծի վերաբերյալ (այսուհետ Նախագիծ)

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 20-րդ հոդվածում ս.թ. մարտի 25-ին ընդունված օրենքով կատարվեց լրացում, և նախատեսվեց ավագանու անդամի հրաժարականի դիմում ներկայացնելուց հետո այն հետ վերցնելու հնարավորության վերաբերյալ դրույթ:

Առաջարկում եմ նույնաբովանդակ դրույթ սահմանել Նախագծի 13-րդ հոդվածով: